ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/116

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից 26.11.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 26.11.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«1. Բողոքի հիմքում ընկած փաստերը.

• 30.10.2018թ.-ին Պատվիրատուի գնանշման հարցման հանձնաժողովի կողմից տրվել է հայտարարություն գնանշման հարցման մասին և հրավեր Գավառ քաղաքի կարիքների համար Գավառ քաղաքի Կենտրոնական Հրապարակի լուսասյուների ձեռք բերման համար՝ գնման ծածկագիր ՔՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/7:

• «Նա-ար Քոնսթրաքշը» ՍՊԸ-ն հայտարարված գնանշման հարցմանը և հրավերին մասնակցել է կոնսորցիումային կարգով, համատեղ գործունեության պայմանագրով կնքված՝

ՌԴ ռեզիդենտ «Վիտազ» ՍՊԸ-ի հետ, այսինքն, երկու ընկերությունները ներկայացրել են համատեղ դիմում:

• Մինչև գնանշման հարցմամբ նշված մրցույթին մասնակցելը «Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն պայմանով գործարք է կնքել համապատասխան անձի հետ առ այն, որ եթե «Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն 1-ին և 2-րդ չափաբաժիններով ճանաչվի 1-ին տեղի մասնակից և նրա հետ կնքվի համապատասխան պայմանագիր, ապա վերջինիս որպես փոխառություն 6 ամիս ժամկետով կտրվի փոխառություն 35 մլն ՀՀ դրամի չափով:

• Նշված գործարքի կնքումից հետո, «Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն «Վիտազ» ՍՊԸ-ի հետ բանակցել է համատեղ գործունեության պայմանագրի կնքման շուրջ:

• Կողմերի միջև համատեղ գործունեության պայմանագիրը կնքվել է 05.11.2018թ-ին:

• Հայտի Հավելված 3-ով «Վիտազ» ՍՊԸ-ն հավաստել է, որ համապատասխանում է գնման որակավորման չափանիշերին և անհրաժեշտության դեպքում կներկայացնի դրանք:

• Հանձնաժողովի 06.11.2018թ. թիվ 2 արձանագրությամբ «Նա-ար Քոնսթրաքշն» և «Վիտազ» ՍՊԸ կոնսորցիումը ճանաչվել է մրցույթում 1-ին տեղ զբաղեցնող:

• 13.11.2018թ. Գնահատող Հանձնաժողովի 3-րդ արձանագրությամբ 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից է ճանաչվել «Նա-ար Քոնսթրաքշն» և «Վիտազ» ՍՊ ընկերությունների կոսորցիումը, 2-րդ չափաբաժնով մերժել է կոնսորցիումին և 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Նիկոլ Դուման» ԱԿ-ին:

• Համաձայն 3-րդ արձանագրության, Հանձնաժողովը նշել է, որ ՊԵԿ-ից կատարված հարցման հիման վրա պարզվել է, որ «Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն նախորդ 3 տարիների ընթացքում չի կատարել ոչ մի շրջանառություն, համախառն եկամտի գումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից, և քանի որ գրանցվել է 02.11.2018թ., ուստի չի բավարարում Հրավերի փաթեթի 2.4 կետի 3-րդ ենթակետի պահանջներին, այսինքն ֆինանսական ռեսուրսներին:

• 3-րդ արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել և գնահատել է «Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի ավանդները, որոնք ներդրվել են համատեղ գործունեության պայմանագրով համատեղ գործի՝ Հրավերով նախատեսված 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված գործարքների (գնումների) կատարման համար:

• 20.11.2018թ-ին գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ որոշում է կայացվել 2-րդ չափաբաժնով պայմանագիր կնքել «Նիկոլ Դուման» ԱԿ-ի հետ և սահմանվել է 5-օրյա ժամկետ, որը լրանում է 25.11.2018թ.:

2.Բողոքի իրավական հիմնավորումները և վերլուծությունները.

Գտնում եմ, որ սույն բողոքը հիմնավոր է, բխում է համապատասխան իրավական ակտերից և ենթակա է բավարարման՝ հիմքում ունենալով ներքոհիշյալ պատճառաբանություններն ու հետևությունները:

Գնահատող Հանձնաժողովի կողմից 12.11.2013թ. կազմված արձանագրությունը կապված 2-րդ չափաբաժնով «Նա-ար Քոնսթրաքշն» և «Վիտազ» ՍՊԸ կոնսորցիումի հայտի մերժման մասով ակնհայտ անհիմն է:

Ստացվում է այնպես, որ գնահատման հանձնաժողովը արհեստական տարընթերցման է ենթարկել «ֆինանսական ռեսուրսներ» արտահայտությունը, այն մեկնաբանելով այն իմաստով, ինչը որ նախատեսված է որպես իմպերատիվ պայման հրավերում և ՀՀ գնումների մասին օրենքում, հաշվի չառնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1026-1038, ՀՀ Պետական գնումների մասին օրենքի 437, 1026-1038, ՀՀ գնումների մասին 30-րդ հոդվածի պահանջները:

Այս առումով Գնահատման Հանձնաժողովը թույլ է տվել երկու իրավական տեսանկյունից կոպիտ իրավական սխալներ: Դրանք են.

•«ֆինանսական ռեսուրսներ» արտահայտության մեկնաբանության տեսանկյունից, քանի որ քաղաքացիաիրավական պայմանագրով ֆինանսական ռեսուրսներ արտահայտությունն այլ իմաստ ունի, իսկ գնումների մասին օրենքով սահմանված ֆինանսական ռեսուրսներ արտահայտությունն՝ այլ իմաստ ունի.

•Համատեղ գործունեության դեպքում մասնակիցների համատեղ կամ միասնական որակավորման հանգամանքի հաշվի չառնելու պայմանը:

Գնահատման Հանձնաժողովը ֆինանսական ռեսուրսներ արտահայտությունը, որը նախատեսված է համատեղ գործունեության պայմանագրով նույնականացրել է Հրավերում նշված ֆինանսական ռեսուրսներ արտահայտության հետ, որն ըստ էության սխալ է: Համատեղ գործունեության պայմանագրով մասնակիցների մրցույթին մասնակցության իրավական հիմնախնդիրները ենթակա են դիտարկման բացառապես պարտավորությունները, պայմանագրային հարաբերությունները կարգավորող իրավադրույթների տեսանկյունից: Համատեղ գործունեության պայմանագրով որպես ավանդ բնակաբար մասնակցի կողմից չէր կարող ներդրվել օբյեկտիվորեն նախորդ 3 տարիների շրջանառությունը, համախառն եկամուտը: Դրանք չեն կարող հանդիսանալ քաղաքացիական շրջանառության օբյեկտներ, հետևաբար նաև քաղաքացիաիրավական պայմանագրի առարկա, կամ առարկայի օբյեկտ: «Ֆինանսական ռեսուրնսներ» արտահայտությունը, որպես այդպիսին, ֆինանսների՝ որպես գիտության՝ գիտական հասկացություն է, ինչու չէ նաև տնեսագիտական կատեգորիա:

Հետևաբար, Կոմսորցիումի պայմանագրով «ֆինանսական ռեսուրսներ» արտահայտությունը ենթակա է դիտարկման բացառապես քաղաքացիաիրավական դաշտում:

ՀՀ քաղ. օր. 447-րդ հոդվածի 1-ին մասի պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:

Ինչպես արդեն իսկ նշվեց, «Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն համապատասխան անձի հետ կնքել է պայմանագիր գնանշմանը մասնակցելուց հաղթելու դեպքում փոխառություն ստանալու համար: Ի դեպ այս երևույթը բավականին իրավաչափ է հենց գնումների մասին օրենքով: Այսպես. ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր տվյալների համապատասխանության ապահովման շրջանակում մասնակիցը, անհրաժեշտության դեպքում կարող է հիմնվել այլ անձանց ֆինանսական և տեխնիկական միջոցների վրա՝ համապատասխան պայմանագրով սահմանված իրավահարաբերության հիման վրա:

Դատելով վերը նշված իրավանորմի բառերի և արտահայտությունների ուղիղ բառացի նշանակությունից, գտնում ենք որ բավարար է միայն այս իրավական նորմը, որպեսզի սույն բողոքը բավարարվի և հաստատվի գնահատման Հանձնաժողովի ակնհայտ ապօրինությունը: Բացի պայմանով փոխառության պայմանագրի առկայության հանգամանքը, «Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն կարող էր օգտվել նաև հենց «Վիտազ» ՍՊԸ-ի հնարավորություններից:

Համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 4-րդ հոդվածի՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հանդիսանալով գնումների մասին օրենսդրության մաս, միևնույն ժամանակ գլխավոր կարգավորող իրավական ակտ, միևնույն ժամանակ իր կարգավորիչ ազդեցությունն ունի գնման գործընթացներում իրավունքների և պարտականությունների վրա:

Համաձայն ՀՀ քաղ. օր. 437-րդ հոդվածի համաձայն՝ Քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս: Պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան

պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով: ՀՀ քաղ. օր. 438-րդ հոդվածը սահմանում է, որ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին):

Համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

4) համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ (հայտեր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքը համատեղ գործունեության պայմանագրի հետ կապված հարաբերությունների բովանդակությանը չի անդրադառնում, այլ անդրադառնում է կողմերի մասնակցության կարգավիճակի հետ կապված հարաբերություններին: Ինչպես նկատում ենք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետով, սահմանված է, որ հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները: Այնինչ հրավերի 2.7 կետում նշված է, բառացի հետևյալը. հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Փաստորեն, «Գնումների մասին» ՀՀ օրենքը սահմանում է իմպերատիվ կարգով, որ պետք է հաշվի առնվեն համատեղ գործունեության պայմանագրի բոլոր մասնակիցների միասնական որակավորումները իսկ հրավերը սահմանում է, որ պետք է հաշվի առնվի յուրաքանչյուր մասնակցի, անդամի որակավորումը: Օրենքի և հրավերի մեջ առկա է էական հակասություն: Հակասության լուծման տրամաբանական մեթոդի պայմաններում հանգում ենք այն կարծիքին, որ ՀՀ գնումների մասին օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված «միասնական որակավորումներ» արտահայտությունը բխում է հենց առանց իրավաբանական անձ կազմավորելու համատեղ գործունեության պայմանագրի էությունից և

իմաստից: Իսկ Հրավերը փաստորեն բխում է ՀՀ Կառավարության 526-րդ որոշմամբ սահմանված կարգից, որի 31-րդ կետում նշված է, որ մասնակիցները կարող են գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝ հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը, հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին: Վերջնական իրավանորմերի հիերարխիայի տեսանկյունից, որը պարտադիր պայման է օրենքի, իրավունքի գերակայության սզբունքի ապահովման և պահպանման համար, անկասկած օրենքը բարձր իրավաբանական ուժ ունի: Այսպես, համաձայն ՀՀ Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի նորմատիվ իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին:

Նշված իրավանորմի տեսանկյունից օբյեկտիվորեն բացահայտենք իրավիճակը.

• Ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետը ուղիղ իմաստով, իմպերատիվ կարգով սահմանում է «հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները»:

• Կոնկրետ այս դեպքում գործ չունենք ընդհանուր և հատուկ նորմերի միջև հակասության հետ, քանի որ նախ նորմատիվ իրավական ակտերը չունեն հավասար իրավաբանական ուժ, այսինքն օրենքը և ՀՀ Կառավարության որոշումը, ապա նաև հակասությունները միևնույն իրավական ակտի մեջ չեն, նրա ընդհանուր և հատուկ մասերի մեջ չեն:

• Տվյալ դեպքում որպես ավելի վաղ ընդունված իրավական ակտ հանդես է գալիս «Գնումների մասին» ՀՀ օրենքը:

Անհերքելի է ՀՀ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված պահանջի կիրառումը սույն իրավահարաբերությունների նկատմամբ և որի արդյունքում ուղիղ մեկնաբանման և բացահայտման է ենթակա է «միասնական որակավորումներ» արտահայտությունը: Միասնական որակավորումների դեպքում հաշվի է առնվում ոչ թե յուրաքանչյուր կողմի՝ առանձին վերցրած որակավորումները, այլ ընդհանուր միասնական որակավորումները: Կողմերից մեկի մոտ կարող է բացակայել միասնական որակավորման որևէ չափանիշ, ապա մյուս կողմը լրացնում է այդ չափանիշը, եթե ունի այն:

Սա բխում է հենց առանց իրավաբանական անձ կազմավորելու համատեղ գործունեության պայմանագրի էությունից ու առանձնահատկություններից:

•«Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն բավարարում է գնումներին մասնակցելու իրավունք ունեցող անձնաց չափանիշերին և չունի այն հատկանիշերը որոնք սահմանված են Հրավերի 2.1 կետով և որոնց պարագայում անձն իրավունք չունի մասնակցել գնման գործընթացներին:

•«Վիտազ» ՍՊԸ-ն ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ է:

•«Վիտազ»> ՍՊԸ-ն բավարարում է գնումներին մասնակցելու իրավունք ունեցող անձնաց չափանիշերին և չունի այն հատկանիշերը որոնք սահմանված են Հրավերի 2,1 կետով և որոնց պարագայում անձն իրավունք չունի մասնակցել գնման գործընթացներին:

•Միասնական որակավորումների հաշվառման պայմաններում փաստորեն հաշվի առնելով «Վիտազ» ՍՊԸ-ի ոչ ռեզիդենտ լինելու հանգամանքը, գործում են հետևյալ կանոնները. Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ-ի թիվ 526-րդ որոշման 1-ին Հավելվածի 100-րդ կետի 9-րդ ենթակետի՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց, իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարվա համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ընդհանուր գումարից, հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ եթե մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա մասնակիցը հայտով միայն հայտարարություն է ներկայացնում պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին:

Սույն իրավական նորմով վերջնականորեն իրավական տեսանկյունից ամրագրվում, ամրապնդվում է «Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ բողոքը, պահանջը և հիմնավորումները և բողոքարկվող որոշումն ուղղակի հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին ու ենթակա է անհապաղ վերացման, քանի որ «միասնական որակավորմներ»

արտահայտության իրավաբանական իմաստի հաշվառման պայմաններում «Վիտազ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է համապատասխան հայտարարություն:

Համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Նույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը պատասխանատվություն է կրում հանձնաժողովի գործունեության՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանության համար:

Գնահատող հանձնաժողովի ապօրինի որոշման պայմաններում փաստորեն խախտվել է գնումներում օրինականության ապահովման սկզբունքը, նաև գնումներին մասնակցության հավասարության իմպերատիվ պայմանը, համատեղ գործունեության պայմանգրի կողմերի իրավունքները խախտել է՝ բարդացնելով արհեստականորեն նրանց լիարժեք մասնակցությանը և 1-ին տեղ գրավելուն ճանաչելու կարևոր պայմանը, ի վերջո զրկելով վերջիններիս որպես 1-ին տեղ ճանաչված մասնակցի կնքելու գնման համապատասխան պայմանագիր, որով էլ սահմանափակվել է կողմերի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունքը:

3.Պահանջ.

1.Հիմք ընդունելով վերը բերված հիմնավորումները խնդրում ենք քննել սույն բողոքը և ոչ իրավաչափ ճանաչել գնահատող հանձնաժողովի կողմից գնման ծածկագիր ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/7-ով գնահատման հանձնաժողովի 20.11.2018թ. թիվ 4 արձանագրության «Նիկոլ Դուման» ԱԿ-ին 2-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը, 21.11.2018թ. պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշման մասին հայտարարությունը և պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունելու նոր որոշում՝ «Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ և «Վիտազ» ՍՊԸ Կոնսորցիումին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին:

2.Խնդրում ենք կիրառել ժամանակավոր միջոց՝ պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կողմից պայմանագիր կնքելու գործընթացը մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում կայացնելը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Միեր Շահնազարյանը:

2. <u>Գավառի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Գավառի քաղաքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից 26.11.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 29.11.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 27.11.2018թ. գրության, հայտնում ենք, որ Գավառի քաղաքային համայնքի կողմից Գավառ քաղաքի Կենտրոնական Հրապարակի լուսասյուների ձեռքբերման նպատակով 30.10.2018թ. հայտարարվել է «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման մրցույթ /այսուհետ նաև՝ Մրցույթ/:

Մրցույթի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.4 ենթակետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Նույն կետի 2.5 ենաթակետի 3-րդ մասի համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա.Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

գ. եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պայմանը չի գործում և տվյալ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն:

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն ու «Վիտազ» ՍՊԸ-ն /կոնսորցիում /այսուհետ նաև՝ Բողոքաբեր/ և «Նիկոլ Դուման» Ա/Կ-ն:

Բողոքաբերը հայտով ներկայացրել է «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի և «Վիտազ» ՍՊԸ-ի միջև 05.11.2018թ. կնքված համատեղ գործունեության պայմանագիրը /այսուհետ նաև՝ Պայմանագիր/:

Պայմանագրի համաձայն՝ «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն հանդես է գալիս որպես Գործընկեր 1, իսկ «Վիտազ» ՍՊԸ-ն՝ Գործընկեր 2:

Պայմանագրի 1.2, 1.2.1 և 1.2.2 կետերի համաձայն՝ Գործընկեր 1-ը որպես ավանդ պարտավորվում է ներդնել Տեխնիկական միջոցներ, Ֆինանսական միջոցներ և Աշխատանքային ռեսուրսներ, իսկ Գործընկեր 2-ը՝ Մասնագիտական փորձառություն, շրջանառություն:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ 06.11.2018թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն ու «Վիտազ» ՍՊԸ-ն /կոնսորցիում/ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից և որոշում է կայացվել մանակիցների տվյալների ճշտման համար հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե /այսուհետ նաև՝ Կոմիտե/:

Կոմիտեի կողմից 13.11.2018թ. ստացվել է եզրակացություն, որի համաձայն Բողոքաբերը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից /ընդհանրապես չկա/, հայտը ներկայացվելու

տարվան նախորդող տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը:

Հանձնաժողովի 13.11.2018թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով կոնսորցիումի պայմանագիրը և Կոմիտեի կողմից ստացված եզրակացությունը, ինչպես նաև ուսումնասիրելով www.petekamutner.am կայքում առկա տեղեկատվությունն այն մասին, որ Բողոքաբերը գրանցվել և գործում է 02.11.2018թ.-ից, ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով և Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ՝ Հանձնաժողովը որոշեց «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով գնահատել մրցույթի հրավերով նախատեսված պահանջներին անհամապատասխան և մերժել:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին, իսկ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ին թիվ 2 չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի 20.11.2018թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ն թիվ 2 չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և սահմանվել է 5 օրացուցային օր անգործության ժամկետ:

www.gnumner.am կայքում 21.11.2018թ. հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից;

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, ուսումնասիրելով վերոնշյալ իրավական հիմքերը և փաստական հանգամանքները, գտնում ենք, որ «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի բողոքն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոքաբերը ներկայացված բողոքով փորձ է կատարում շրջանցել իր իսկ կողմից թույլ տրված ակնհայտ սխալը, քանի որ Մրցույթի հրավերով հստակ, առանց երկակի մեկնաբանության սահմանվել է, այն որակավորման չափանիշները, որոնց պետք է բավարարեն մասնակիցները, Մրցույթին մասնակցելու համար:

Բողոքում նշվել է, որ Հանձնաժողովը Պայմանագրով նշված ֆինանսական ռեսուրսներ արտահայտությունը նույնականացրել է հրավերով նշված ֆինանսական միջոցներ արտահայտության հետ, որն ըստ էության սխալ է:

Այս մասով ցանկանում ենք հայտնել, որ Պայմանագրի մեջ Գործընկեր 2-ի ստանձնած ավանդի մասով ընդհանրապես չի նշվել «ֆինանսական ռեսուրսներ» արտահայտությունը, այլ նշվել է շրջանառություն, իսկ հրավերով սահմանվել է, որպես որակավորման չափանիշ մասնակիցը պետք է ունենա ֆինանսական միջոցներ, իսկ ֆինանսական միջոցների սահմանումը սահմանվել է հրավերով:

Բողոքաբերի կողմից բողոքում նշված ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված բազմաթիվ իրավանորմերը սոսկ նպատակ է հետապնդում անհիմն կերպով արդարացնելու իր կողմից Պայմանագրում թույլ տրված սխալը և որևէ առնչություն չունեն վիճարկվող որոշման հետ, քանի որ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտը պետք է գնահատվի հրավերով սահմանված կարգով, իսկ հրավերով սահմանված է 4 չափանիշ՝ այդ թվում «ֆինանսական միջոցներ» չափանիշը, որոնց պետք է համապատասխանի մասնակիցը: Նշված չափանիշներից որևէ մեկին չհամապատասխանելու դեպքում մասնակցի հայտը պետք է մերժվի, իսկ տվյալ պարագայում նույնիսկ եթե հաշվի առնենք որ «Վիտազ» ՍՊԸ-ն շրջանառության մասով պետք է ապահովի Գործընկեր 1-ին, ապա ամեն դեպքում «ֆինանսական միջոցներ» չափորոշիչի մասով Պայմանագրով իր վրա պարտավորություն է նաև ստանձնել «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն: Եթե ստանձնել է, ապա պետք է նաև ապահովի, իսկ չապահովելու դեպքում հայտը ենթկա է մերժման, իսկ այս դեպքում քաղաքացիական օրենսդրությամբ նշված նորմերը վերաբերելի չեն նշված խնդրի հետ: Ավելին, Բողոքաբերը բողոքում անդրադարձել է նշված խնդրին և նշել է, որ հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ հրավերով սահմանված պահանջներին: Այս դեպքում գնահատող հանձնաժողովը գործել է նշված կետին համապատասխան և ֆինանսական միջեցներ չափանիշին չբավարարելու պարագայում մերժել է «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի հայտը:

Ելնելով վերոգրյալից՝ Գավառի քաղաքապետարանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում է «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ մերժել»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Լինա Քոչարյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/116 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից 26.11.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 06.11.2018թ. նիստի թիվ 2, 13.11.2018թ. նիստի թիվ 3, 20.11.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, Գավառի քաղաքապետարանի 29.11.2018թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը, «Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ և «Վիտազ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը.

Գավառի քաղաքային համայնքի կարիքների համար Գավառ քաղաքի Կենտրոնական հրապարակի լուսասյուների աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Նա-ար Քոնսթրաքշն» և «Վիտազ» ՍՊԸ-ները՝ համատեղության կարգով (այսուհետ՝ նաև կոնսորցիում) և «Նիկոլ Դուման» Ա/Կ-ն:

Կոնսորցիումը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝ N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն և «Վիտազ» ՍՊԸ-ն համատեղ հայտով ներկայացրել են «Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Գործընկեր 1) և «Վիտազ» ՍՊԸ-ի (այսուհետ՝

Գործընկեր 2) միջև 05.11.2018թ. կնքված՝ «Համատեղ գործունեության պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կողմերը պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել՝ համատեղ շահույթ ստանալու նպատակով, իրականացնելով մատակարարումներ «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝

1.2 Կողմերը պարտավորվում են ներդնել հետևյալ ավանդները.

1.2.1 «Գործընկեր 1»՝ Տեխնիկական միջոցներ, Ֆինանսական միջոցներ, Աշխատանքային ռեսուրսներ:

1.2.2 «Գործընկեր 2»՝ Մասնագիտական փորձառություն, շրջանառություն:

Հանձնաժողովի 06.11.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության՝

- 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «Վիտազ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 46,104,000 ՀՀ դրամ, իսկ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ի գնային առաջարկը՝ 46,920,000 ՀՀ դրամ:

- 3-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «Վիտազ» ՍՊԸ կոնսորցիումին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովի 13.11.2018թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ կատարած հարցմանը ստացվել է եզրակացություն, որ «Գործընկեր 1» հանդիսացող «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների ընթացքում չի կատարել ոչ մի շրջանառություն, և համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից, ինչպես նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական կայքէջում նշված է, որ «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն գրանցվել և գործում է 02.11.2018թ. սկսած, ինչը չի բավարարում Հրավերի 1-ին մասի 2.4 կետի 3-րդ ենթակետի պահանջներին:

Հանձնաժողովը որոշել է կոնսորցիումի հայտը 2-րդ չափաբաժնի մասով գնահատել մրցույթի հրավերով նախատեսված պահանջներին անհամապատասխան:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «Վիտազ» ՍՊԸ կոնսորցիումին, իսկ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ին 2–րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մանակից:

«ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է, որ հանձնաժողովի կայացրած որոշումն ուղղակիորեն հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին, որը սահմանում է, որ կոնսորցիումի անդամների միասնական որակավորումների դեպքում հաշվի է առնվում ոչ թե յուրաքանչյուր կողմի՝ առանձին վերցրած որակավորումները, այլ ընդհանուր՝ միասնական որակավորումները: Այսինքն, եթե Գործընկերներից մեկի մոտ բացակայում է միասնական որակավորման որևէ չափանիշ, ապա մյուս կողմը կարող է լրացնել այդ չափանիշը, եթե ունի այն: Բողոքաբերի կարծիքով, սա բխում է հենց առանց իրավաբանական անձ կազմավորելու համատեղ գործունեության պայմանագրի էությունից ու առաձնահատկություններից:

Վերը նշվածի տրամաբանությունից ելնելով՝ Բողոքաբերը տեսակետ հայտնեց, որ տվյալ դեպքում կոնսորցիումը բավարարում է մասնակիցների որակավորմանը այն պահանջներին, որոնք սահմանված են Հրավերով: Շեշտը դնելով այն հանգամանքի վրա, որ «Վիտազ» ՍՊԸ-ն ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ է, և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի համաձայն՝ հաշվի առնելով «Վիտազ» ՍՊԸ-ի ոչ ռեզիդենտ լինելու հանգամանքը, վերջինս իր հայտով միայն հայտարարություն է ներկայացնում պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին, հետևաբար, «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «Վիտազ» ՍՊԸ կոնսորցիումի միասնական հայտը Հանձնաժողովի կողմից պետք է գնահատվեր Հրավերի պահանջներին բավարարող:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք)՝

• 436-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն;

• 1026-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրով երկու կամ ավելի անձինք (մասնակիցները) պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

- 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք նախատեսված չեն նույն հոդվածով.

- 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

- 30-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

ա. հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը,

բ. հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին,

- 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է նույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա նույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը

հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն կետով նախատեսված պահանջները:

«ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.4 ենթակետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Նույն կետի 2.5 ենաթակետի 3-րդ մասի համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա.Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ. սույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է նույն հրավերով սահմանված պայմաններով:

գ. եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա նույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պայմանը չի գործում և տվյալ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն:

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Հրավերի՝

- 2.7 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցները կարող են նույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ նույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.15 կետի համաձայն՝ Կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի և «Վիտազ» ՍՊԸ-ի միջև 05.11.2018թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի համաձայն՝ «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն հանդես է գալիս որպես Գործընկեր 1, իսկ «Վիտազ» ՍՊԸ-ն՝ Գործընկեր 2, ընդ որում, Գործընկեր 1-ը որպես ավանդ պարտավորվել է ներդնել տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ, իսկ Գործընկեր 2-ը՝ մասնագիտական փորձառություն, շրջանառություն:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ստացված եզրակացության համաձայն՝ «Գործընկեր 1» հանդիսացող «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է վերջինիս գնային առաջարկից (հավասար է զրոյի):

Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի և «Վիտազ» ՍՊԸ-ի միջև 05.11.2018թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրով «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն է ստանձնել «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով Հրավերով նախատեսված պարտավորությունը, ինչպես նաև այն, որ «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է վերջինիս գնային առաջարկից, Բողոքներ քննող անձը գտնում է, որ վերջինիս որակավորումը չի համապատասխանում Պայմանագրով ստանձնած՝ Հրավերով սահմանված որակավորման չափանիշի պահանջներին:

Ինչ վերաբերում է Գործընկեր 2-ի՝ «Վիտազ» ՍՊԸ-ի՝ համատեղ գործունեության պայմանագրում որպես ավանդ նշված՝ «շրջանառություն» պարտավորությանը, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ որակավորման նման չափանիշ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ, ուստի այն չէր կարող սահմանվել ընթացակարգի հրավերով և ներկայացվել մասնակցի կողմից որպես համատեղ գործունեության պայմանագրում վերջինիս կողմից ներդրվող ավանդ:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ «ՆԱ-ԱՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «Վիտազ» ՍՊԸ կոնսորցիումի հայտը մերժելով՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից ՝ Բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նա-ար Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից 26.11.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ